

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն Կ Ա Ռ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«\_\_\_»\_\_\_\_\_2013թ. N\_\_\_-Ն

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 1911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԳՈՒՅՔԸ  
ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասը, Հյաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» N 1911-Ն որոշման 1-ին կետով հաստատված N 7 հավելվածի Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի՝ «Հրազդանի տարածաշրջան» բաժնի 7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինության Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված ամրացված ք.Հրազդան, Կոստանյան 1 հասցեում գտնվող ուսումնական շենքի՝ 824,57 մ<sup>2</sup> մակերեսով, XX,X սկզբնական և YY,Y հաշվեկշռային արժեքով երկհարկանի ձախակողմյան մասնաշենքը և դպրոցի կողմից չօգտագործվող կենտրոնական մասնաշենքին միացնող 130մ<sup>2</sup> մակերեսով միջանցքն ու շենքի օգտագործման և սպասարկման համար անհրաժեշտ ZZ,Zմ<sup>2</sup> մակերեսով հողատարածքը հետ վերցնել ու անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել Հայաստանի

Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր պետական գույքի կառավարման վարչության պետին, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 2-րդ կետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը

4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշման 3-րդ կետի աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ պայմանագրից բխող նոտարական վավերացումը և գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացվելու են «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՏԵՂԵԿԱՆՔ -ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ

ՆՈՅՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 1911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԳՈՒՅՔԸ

ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Սույն որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությամբ: Հրազդանի բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ներկայում տեղեկայված է «Հրազդանի N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման 1-ին կետով հաստատված N 7 հավելվածի Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի՝ «Հրազդանի տարածաշրջան» բաժնի 7-րդ կետի համաձայն որոշվել էր «Հրազդանի պետական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ազատված 3-րդ մասնաշենքի 4-րդ հարկն անհատույց եւ անժամկետ օգտագործման իրավունքով հանձնել «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, սակայն նկատի ունենալով ուսումնական հաստատության աշխատանքային առանձնահատկությունները, ինչպես նաև այն, որ դրանով կխախտվեին բժշկական հաստատությանը ներկայացվող հիգիենիկ-հակահամաճարակային անհրաժեշտ նորմերը և հիվանդանոցային ռեժիմը, առավել նպատակահարմար է «Հրազդանի N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ամրացված 824,57 քառակուսի մետր մակերեսով երկհարկանի մասնաշենքը և դպրոցի կողմից չօգտագործվող կենտրոնական մասնաշենքին միացնող 130 քառակուսի մետր մակերեսով միջանցքը հետ վերցնել և անհատույց օգտագործման իրավունքով անժամկետ ամրացնել քոլեջին՝ քոլեջի բնականոն ուսումնական պրոցեսը ապահովելու նպատակով:

Նախագծի ընդունմամբ հիշյալ տարածքները կամրացվեն «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

## ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 1911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԳՈՒՅՔԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N1911-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու, գույքը հետ վերցնելու և ամրացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումն այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնի:

## ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 1911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԳՈՒՅՔԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N1911-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու, գույքը հետ վերցնելու և ամրացնելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: